

**2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

<b>Պատասխանատու մարմինը</b>	<b>Ծրագրի կետը</b>	<b>Գերակա խնդիրները</b>	<b>Գերակա խնդրի կատարման ուղղված քայլերը</b>
1	2	3	4
Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն	09.06.01.	«13. Կրթության ոլորտում ՏՀՏ ներդրում և շարունակականության ապահովում»	<p>Կրթության ոլորտում տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրման և դրա շարունակականության ապահովման ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները՝</p> <p><b>Հայաստանի կրթական ցանցի (ՀԿՑ) կառավարում</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• իրականացվել է 1414 ուսումնական հաստատություններ ընդգրկող ցանցի աշխատանքի ամենօրյա հսկողությունը.</li> <li>✓ վերահսկվել է ՀԿՑ-ի տեխնիկական սպասարկման աշխատանքը,</li> <li>✓ կատարվել է դպրոցների էլեկտրոնային հասցեների օգտագործման ստուգումը,</li> <li>✓ հաշվառվել է դպրոցների օգտագործած ինտերնետի ծավալը,</li> <li>✓ կատարվել են ՀԿՑ կենտրոնական հանգույցի սպասարկման աշխատանքները,</li> <li>• իրականացվել է ՀԿՑ-ի կենտրոնական հանգույցում գործող սերվերների տեխնիկական սպասարկումը. ապահովվել կայքերի անխափան աշխատանքը,</li> </ul> <p>ՀԿՑ-ում ապահովվել են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• արտաքին միջամտություններից ցանցի պաշտպանությունը, գործել են ինտերնետային պարունակությունը հնարավորինս սահմանափակող ֆիլտրային ծրագիրը, տվյալների փաթեթների դինամիկ ուղղորդումը, ցանցում եղած բոլոր համակարգիչների ավտոմատ թարմացումով հակավիրուսային կենտրոնացված համակարգը,</li> <li>• կապուղու ծանրաբեռնվածությունը ցուցադրող, գրանցող և վիճակագրական տվյալներ հավաքող առցանց համակարգի, ՀԿՑ ընթացիկ վիճակը բնութագրող դինամիկ շտեմարանի, ուսումնական հաստատությունների օգտագործած ինտերնետային կայքերի և տվյալների ծավալների մասին գրանցումների համակարգի գործունեությունը,</li> <li>• ցանցում ընդգրկված ուսումնական հաստատությունների համար իրականացվել է վիճակագրական տվյալների հավաքման և SQL համատեղելի բազայի ու WEB սերվերի վրա տեղադրված ուսումնական հաստատությունների էջերի տեխնիկական սպասարկման, էլեկտրոնային փոստի վարման աշխատանքների իրականացումը,</li> <li>• կազմվել են համապատասխան ամսական</li> </ul>

			<p>հաշվետվությունները:</p> <p><b>Շարժական ինտերնետային-համակարգչային կայանի (ՇԻՀԿ) շահագործում</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ախպրաձոր, Ծովասար գյուղերի միջնակարգ դպրոցներում կայանի դասընթացներին մասնակցել են 66 աշակերտներ, վերապատրաստվել՝ 5 ուսուցիչներ,</li> <li>• Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Խնուշինակ, Սպիտակաշեն և Գիշի գյուղերի միջնակարգ դպրոցներում կայանի դասընթացներին մասնակցել են 111 աշակերտներ, վերապատրաստվել՝ 51 ուսուցիչներ,</li> <li>• իրականացվել է ՇԻՀԿ-ի շահագործման ընթացիկ վերահսկումը:</li> </ul> <p><b>«Հայկական կրթական միջավայր» պորտալի և ենթակայքերի աշխատանքի կազմակերպում, ԿՏԱԿ-ի կայքի վարում</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• իրականացվել է «Հայկական կրթական միջավայրի» (<a href="http://www.armedu.am">www.armedu.am</a>) տեխնիկական սպասարկման աշխատանքը, հարստացվել է բովանդակային պարունակությունը,</li> <li>• գործարկվել են պորտալի ենթակայքերը. <ul style="list-style-type: none"> <li>✓ «Հայկական կրթական միջավայր» ֆորումը (<a href="http://forum.armedu.am">http://forum.armedu.am</a>, շուրջ 2310 թեմա, 79030 գրառում, 5720 գրանցված օգտվող). ստեղծվել են 50 նոր ուսումնամեթոդական թեմաներ, կատարվել է 1030 գրառում, գրանցվել է 235 նոր մասնակից, տրամադրվել է մասնագիտական խորհրդատվություն, ՀՀ-ում արտակարգ իրավիճակով պայմանավորված մարտի 20-ին ստեղծվել է տեղեկատվական «Հեռավար ուսուցման կազմակերպում» ենթաբաժինը,</li> <li>✓ «Պաշարների շտեմարան» կայքը (<a href="http://lib.armedu.am">http://lib.armedu.am</a>, ավելի քան 9490 պաշար, շուրջ 7440 գրանցված օգտվող). ըստ դասակարգված բաժինների տեղադրվել են շուրջ 200 նոր էլեկտրոնային պաշարներ (այդ թվում՝ ուսումնական և մեթոդական նյութեր, կրթական փաստաթղթեր, Դպրոցականների առարկայական օլիմպիադայի ցուցակները, առաջադրանքներն ու արդյունքները, «Կրթություն 2020» շաբաթաթերթի համարները և այլն),</li> <li>✓ Եվրոպական միության eTwinning Plus ծրագրի <a href="http://etwinningplus.armedu.am/">http://etwinningplus.armedu.am/</a> տեղեկատվա-կան և «Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ» (<a href="http://esource.armedu.am/">http://esource.armedu.am/</a>) կայքերը,</li> <li>✓ «Դպրոցական կայքեր» <a href="http://schoolsite.am/">http://schoolsite.am/</a> տիրույթում գործող դպրոցների կայքերի շահագործմանն աջակցելու նպատակով տրամադրվել է խորհրդատվություն,</li> <li>✓ «Հեռավար ուսուցում» համակարգը (<a href="http://elearning.armedu.am/">http://elearning.armedu.am/</a>), կազմակերպվել են հեռավար</li> </ul> </li> </ul>
--	--	--	--

			<p>դասընթացներ.</p> <ul style="list-style-type: none"> <li>- 52 ուսուցիչների համար կազմակերպվել է «Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ» թեմայով հերթական դասընթացը. ակտիվ ու արդյունավետ մասնակցություն ցուցաբերած 32 ուսուցիչներ ստացել են ԿՏԱԿ-ի հավաստագրեր,</li> <li>- տարբեր առարկաների 10 մասնագետներ անցկացրել են հեռավար դասընթացներ 293 գործընկեր-ուսուցիչների համար,</li> <li>- ՀՀ-ում արտակարգ իրավիճակով պայմանավորված 439 ուսուցիչների համար (չորս խմբով) կազմակերպվել է «Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ» թեմայով արագացված դասընթացներ (սկիզբը՝ 20-22 մարտի), ակտիվ և արդյունավետ մասնակցություն են ցուցաբերել 275-ը,</li> <li>- ուսումնական գործընթացի շարունակա-կանության նպատակով տարբեր առարկաների մասնագետներ անցկացրել են 3 հեռավար դասընթացներ 71 գործընկեր-ուսուցիչների համար և 16 ուսուցիչներ՝ ուսումնական պլանին համապատասխան առարկայական դասընթացներ՝ աշակերտների համար,</li> </ul> <p>✓ ստեղծվել է «Հեռավար ուսուցման կենտրոն» (<a href="https://dlc.armedu.am/">https://dlc.armedu.am/</a>) համակարգը. հաջողված հեռավար դասընթացները (ՏՀՏ գործիքներ՝ 3 դասընթաց, ուսումնական առարկաներ՝ 34 թեմաներ) մարտի 16-ից զուգահեռաբար տեղադրվում են նոր համակարգում՝ բոլոր այցելուների համար (հյուրի կարգավիճակով) բաց և հասանելի ձևով,</p> <p>✓ ՀՀ-ում արտակարգ իրավիճակում, հանրակրթական ուսումնական հաստատությունների կրթական գործընթացի շարունակականությունը հեռավար ուսուցման և առցանց գործիքների միջոցով կազմակերպելու աշխատանքին աջակցելու նպատակով մարտի 16-ից գործարկվել է «Հեռավար ուսուցման համալիր էջը» (<a href="https://heravar.armedu.am/">https://heravar.armedu.am/</a>), որը կրթության ոլորտի կազմակերպիչներին և շահառուներին տրամադրում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>- ուսումնական կայքերի օգտակար հղումներ՝ կից համառոտ նկարագրությամբ,</li> <li>- հեռավար ուսուցման հարթակների, գործիքների նկարագրություններ և դրանց կիրառության մասին համառոտ ուղեցույցներ,</li> <li>- հեռավար, առցանց ուսումնական գործընթացի ուղղությամբ իրականացվող միջոցառումների մասին լուրեր, նորություններ, հայտարարություններ,</li> <li>- հետադարձ կապ,</li> </ul>
--	--	--	---

			<ul style="list-style-type: none"> <li>• գործարկվել է ԿՏԱԿ-ի (<a href="http://www.ktak.am">www.ktak.am</a>) կայքը:</li> </ul> <p><b>Կրթության ոլորտում ՏՀՏ բնագավառի ծրագրեր իրականացնող կազմակերպությունների գործունեության ուսումնասիրություն, գործընկերային կապերի հաստատում և այդ ծրագրերի համակարգում</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• «Ներառող կրթություն ազգային ասոցիացիա» հիմնադրամի հետ ստորագրվել է հուշագիր, որի նպատակն է ապահովել և աջակցել Հայաստանի Հանրապետությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց առանձնահատկություններից և կարիքից բխող կրթական իրավունքի ամբողջական իրականացմանը,</li> <li>• Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների գնահատման էլեկտրոնային համակարգի շահագործման 2 փուլով վերապատրաստումների իրականացում Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի մասնագետների համար, աշխատանքային խմբի ամփոփիչ հավաք և առաջարկությունների վերջնական փաթեթի ներկայացում,</li> <li>• ԱՄՆ ՄՁԳ Edu2Work ծրագրի շրջանակներում իրականացվել է       <ul style="list-style-type: none"> <li>✓ Երևանի պետական դպրոցների 9-րդ դասարանցիների կիսամյակային գնահատականների բազայի ներկայացում՝ ԴԿՏ համակարգի ընդհանուր բազայից՝ անհատական կողավորման սկզբունքով,</li> <li>✓ Երևանի պետական ավագ դպրոցների և վարժարանների 12-րդ դասարանի աշակերտների հետագա մասնագիտության ընտրության և դրա վրա ազդող գործոնները հասկանալու նպատակով իրականացվել է սոց հարցում՝ բազմաստիճան շերտավորված ընտրանքի սկզբունքներով:</li> </ul> </li> <li>• տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության նպատակով կազմակերպվել են հանդիպումներ, քննարկումներ,       <ul style="list-style-type: none"> <li>✓ ապահովվել է մասնակցություն           <ul style="list-style-type: none"> <li>- A&amp;WW-վիրտուալ դպրոցի կազմակերպած «Վիրտուալ Էքսպո» կրթական ցուցահանդեսին. ԿՏԱԿ-ի գործունեության երեք ուղղությունների ներկայացում, տնօրենի մասնակցությունը «Կրթության մեջ տեխնոլոգիաների օգտագործման առավելությունները ու վնասները» թեմայով քննարկմանը,</li> <li>- ԱՄՆ ՄՁԳ MEASURE Evaluation ծրագրի փակման միջոցառմանը:</li> </ul> </li> </ul> </li> </ul> <p><b>Եվրամիության Իթվինիզ Պլուս ծրագրի շարունակականության ապահովում</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• համակարգվել է ծրագրի մասնակից ավելի քան 380</li> </ul>
--	--	--	---

			<p>դպրոցների շուրջ 1500 ուսուցիչների աշխատանքը,</p> <ul style="list-style-type: none"> <li>• ներկայացվել են 2019 թ. դրամաշնորհային ծրագրի բովանդակային և ֆինանսական հաշվետվությունները,</li> <li>• անցկացվել է ուսուցիչների վերապատրաստման հեռավար դասընթաց «Project based learning in your classroom» թեմայով,</li> <li>• ՀՀ-ում արտակարգ իրավիճակում ուսումնական հաստատությունների կրթական գործընթացի շարունակականությունը հեռավար ուսուցման միջոցով հնարավորինս ապահովելու նպատակով օգտագործվել են Իթվինինգ եվրոպական պորտալի հնարավորությունները.</li> <li>✓ նախագծային մեթոդով դասեր կազմակերպելու նպատակով ներգրավվել են ավելի քան 300 ուսուցիչներ,</li> <li>✓ տարբեր առականների և դասարանների համար ստեղծվել են 47 առարկայական և 4 թեմատիկ պրոյեկտներ (ցանկը՝ <a href="https://etwinningplus.armedu.am/?page_id=2110">https://etwinningplus.armedu.am/?page_id=2110</a>):</li> </ul> <p><b>Ուսումնական հաստատությունների գործունեության վերաբերյալ հետազոտությունների իրականացում և արդյունքների վերլուծություն</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• ՀՀ պետական դպրոցներում SCS կարիքի տարեկան ուսումնասիրության իրականացում, դպրոցներից ստանդարտացված հարցաթերթով տեղեկատվության ստացում. ամենօրյա աշխատանք շուրջ 1400 դպրոցների հետ, ուղարկված տվյալների ստուգում, ճշտումների իրականացում:</li> </ul> <p><b>Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ամբողջականացում</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Դպրոցների կառավարման տեղեկատվական (ԴԿՏ) համակարգի լիարժեք գործունեությունն ապահովելու նպատակով իրականացվել է ԴԿՏ համակարգում բաժինների ու լրացման դաշտերի՝ «Հանրակրթության մասին ՀՀ օրենքին» համապատասխանեցման աշխատանքներ,</li> <li>• մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի կրթության վարչությունների պատասխանատուների համար ԴԿՏ-ում մշակվել է գործիք՝ մարզի (համայնքի) դպրոցների կոմպլեկտավորումները և այլ անհրաժեշտ տեղեկատվություն ստուգելու, տեսնելու և դրանց հիման վրա համապատասխան ֆինանսավորում իրականացնելու համար,</li> <li>• կատարվել են ԴԿՏ համակարգի տեղեկատվության մշտական ստուգման, բազաների ամենօրյա մաքրման, պարբերական թարմացումների ուղեցույցերի մշակման աշխատանքներ,</li> <li>• ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության պայմաններում, հանրակրթական դպրոցների դասավանդողների համար ԴԿՏ-ում շահագործվել է «Էլեկտրոնային մատյան» ենթահամակարգը, մշակվել են ենթահամակարգի շահագործման տեսաուղեցույցեր, իրականացվել են ԴԿՏ-ի բովանդակային և տեխնիկական ամենօրյա սպասարկման,</li> </ul>
--	--	--	--

գրուցարանի վարման, խորհրդատվության տրամադրման աշխատանքներ ծանրաբեռնված աշխատակարգով (ներառյալ շաբաթ և կիրակի օրերը):

**Դպրոցների կառավարման տեղեկատվական (ԴԿՏ) համակարգի տեղեկատվության հիման վրա հանրակրթության 2019-2020 ուսումնական տարվա տարեկան վիճակագրության ամփոփում**

- իրականացվել է լրացուցիչ նոր աղյուսակների ձևավորման աշխատանք (տնային պայմաններում ներգրավված ուսուցիչներ, ընդհանուր ծրագրով հանրակրթական դպրոցներում ԿԱՊԿՈՒ երեխաներ՝ ըստ կարիքի տեսակի և այլն),
- սահմանված ժամկետներում ամփոփ վիճակագրությունը ներկայացվել է ՀՀ ԱՎԿ:

**Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին վիճակագրական տվյալների հավաքում, մշակում, վերլուծություն**

- պատրաստվել են բազմաթիվ վիճակագրական և այլ հաշվետվություններ, ամփոփ տեղեկանքներ՝ ըստ ՀՀ մարզերի, գյուղական և քաղաքային համայնքների, աշակերտների և ուսանողների թվաքանակների, հաստատությունների տիպերի, կրթական ծրագրերի աստիճանի և ըստ այլ անհրաժեշտ չափանիշների և տրամադրվել ՀՀ ԿԳՄՍՆ, Ազգային վիճակագրական կոմիտե, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ), ՋԼՄ-ների, տեղական և միջազգային ՀԿ-ների ԱԺ պատգամավորների և պատգամավորական խմբակցությունների և այլ շահագրգիռ կազմակերպությունների:

**Հեռավար ուսուցման կենտրոնի աշխատանքի կազմակերպում**

- ՀՀ Գեղարքունիքի մարզի Անտառամեջ գյուղի միջնակարգ դպրոցի 7-12-րդ դասարանների 11 աշակերտների համար կազմակերպվել է Ֆիզիկա առարկայի հեռավար ուսուցում՝ ըստ նախապես կազմված ուսումնական պլանի և դասացուցակի,
- ՀՀ Արագածոտնի մարզի Լեռնարոտ գյուղի միջնակարգ դպրոցի 7-12-րդ դասարանների 16 աշակերտների համար կազմակերպվել է Քիմիա առարկայի հեռավար ուսուցում՝ ըստ նախապես կազմված ուսումնական պլանի և դասացուցակի,
- ընտրվել է տնային ուսուցման անհրաժեշտություն ունեցող մեկ երեխա (Հանրապետական մանկավարժա-հոգեբանական կենտրոնի հետ խորհրդակցության արդյունքում), գրանցվել է համակարգում՝ Հայոց լեզու և Մաթեմատիկա առարկաների հեռավար լրացուցիչ-օժանդակ ուսուցման կազմակերպման նպատակով,
- ՀՀ-ում արտակարգ իրավիճակի պայմաններում հեռավար ուսուցման նպատակով ՀՈՒԿ-ի նորագույն սարքավորումների միջոցով կազմակերպվում են տարբեր ուսումնական

			<p>առարկաների առցանց տեսադասերի շարքերի նկարահանման աշխատանքներ. նկարահանվել են 56 տեսադասեր, տեղադրվել են ՅուԹուբ-ի «Կրթական ալիքում» <a href="https://www.youtube.com/user/armeduchannel/">https://www.youtube.com/user/armeduchannel/</a>, հեռարձակվել են հանրապետական և մարզային հեռուստաալիքներով:</p> <p>ՀՀ ուսումնական հաստատություններում (դպրոց ՊՈԱԿ-ներում) կապի հանգույցի, կապի սարքավորումների, տեղային համակարգչային ցանցերի և համակարգիչների ծրագրային սպասարկման համապատասխան համակարգչային տեխնիկական օժանդակման ծառայություն</p> <p>իրականացվել է.</p> <ul style="list-style-type: none"><li>• ՀԿՑ կենտրոնական հանգույցի սպասարկում՝ սերվերային սարքավորումների և սերվերային համակարգերի սպասարկում, դպրոցների ինտերնետ տրաֆիկի մոնիտորինգ,</li><li>• կապի սարքավորումների սպասարկում՝ առցանց կարգավիճակի ապահովում, վերատեղադրում, փոխարինում, կարգավորում և այլն,</li><li>• տեղային համակարգչային ցանցերի սպասարկում,</li><li>• համակարգչային ծրագրային ապահովման սպասարկում:</li></ul>
--	--	--	--